Հավելված N 5
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարության
գլխավոր քարտուղարի
2020 թվականի մարտի 16-ի N 191-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը.
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) թվայնացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 24-32.1-Մ2-3)
1.2. Ենթակա և հաշվետու է.
Գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները.
Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը:
1.4. Աշխատավայրը.
Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վազգեն Սարգսյան 3/3

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

1) իրականացնում է Հայաստանի Հանրապետության թվային փոխակերպման միասնական քաղաքականության և օրակարգի մշակում.
2) իրականացնում է Հայաստանի Հանրապետության թվայնացման օրակարգի իրագործման նպատակով անհրաժեշտ վարչարարական մեխանիզմների, ընթացակարգերի, գործիքակազմի մշակում և իրականացում.
3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության թվայնացման օրակարգի իրականացման ճանապարհային քարտեզի և գործողությունների պլանի մշակում և դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսների պլանավորում և իրագործում.
4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության թվային տվյալների կառավարման համապարփակ քաղաքականության մշակում՝ ներառելով այնպիսի խնդիրների կանոնակարգումը ինչպիսիք են էլեկտրոնային/թվային տվյալների դասակարգման, հավաքման, մշակման, պահպանման, փոխանակման միասնական և ստանդարտ ձևաչափերի մշակում և ներդրում՝ նպաստելով բոլոր ոլորտներում տվյալների վրա հիմնված քաղաքականությունների մշակմանը պետական, մասնավոր և ակադեմիական հատվածներում, էլեկտրոնային ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև խթանելով տվյալների թվայնացման ոլորտում նորարարական էկոհամակարգը:
5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության թվային օրակարգից բխող սույն կետում նշված ոլորտները կարգավորող իրավական ակտերի բարեփոխման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում.

6) իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում հասարակության կիբերհասունությանն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում:
7) Իրականացնում է տնտեսության իրական հատվածներում բիզնես և արտադրական գործընթացներում թվայնացման խրախուսմանն ուղղված քաղաքականության մշակում և իրականացում.
8) իրականացնում է թվայնացման ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային երկկողմ և տարածաշրջանային համագործակցության ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, այդ ծրագրերի իրականացման միջոցառումների պլանավորումը և իրականացման համակարգումը, արդյունքների և ազդեցության մոնիթորինգ և գնահատում:
9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության՝ թվային գլոբալ շուկաների հետ ներդաշնակեցմանը միտված քաղաքականությունների, ռազմավարությունների, ընթացակարգերի, ստանդարտների, ուղեցույցերի մշակում և դրա իրականացում:
10) իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում թվային ծառայությունների հանդեպ հասարակության վստահության բարձրացմանն ու լայն կիրառման խթանմանն ուղղված քաղաքականության և միջոցառումների մշակում և դրա իրականացում:
11) իրականացնում է կիբերանվտանգության ազգային քաղաքականության և դրան առնչվող նորմատիվ իրավական դաշտի, և իրականացման գործողությունների պլանի մշակում և դրա իրականացում:
12) իրականացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ներդրված էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկման արդյունքների և ազդեցության, ինչպես նաև քաղաքացիների և բիզնեսների գոհունակության մոնիթորինգ և գնահատում:
13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում թվային օրակարգի ներդրման համար կարողությունների զարգացում, այդ թվում՝ անհրաժեշտ մասնագետներին ներկայացվող պահանջների մշակում, յուրաքանչյուր պետական մարմնում անհրաժեշտ մարդկային ռեսուրսների կարողությունների գնահատում, նոր ռեսուրսների հավաքագրման և առկա ռեսուրսների զարգացման պլանի կազմում, պետական մարմինների աշխատակազմերի տեղեկատվայնացման և հատուկ համակարգերի պատասխանատու ստորաբաժանումների մասնագետների վերապատրաստման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Իրավունքները.

1) ստանալ ՀՀ թվային փոխակերպման միասնական քաղաքականության և օրակարգի մշակման նպատակով համապատասխան մարմիններից տեղեկատվություն.
2) ստանալ ՀՀ թվայնացման օրակարգի իրագործման նպատակով անհրաժեշտ վարչարարական մեխանիզմների և ընթացակարգերի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքները.
3) ստանալ Հայաստանի Հանրապետության թվայնացման օրակարգի իրականացման ճանապարհային քարտեզի և գործողությունների պլանի մշակում համար անհրաժեշտ տեղեկատվություն.
4) ստանալ Հայաստանի Հանրապետության թվային տվյալների կառավարման համապարփակ քաղաքականության մշակման նպատակով՝ պետական, մասնավոր և ակադեմիական հատվածներից էլեկտրոնային ծառայությունների մատուցման վերաբերյալ տվյալներ.
5) ստանալ ՀՀ թվային օրակարգից բխող նշված ոլորտները կարգավորող իրավական ակտերը.
6) ստանալ Հայաստանի Հանրապետությունում հասարակության կիբերհասունությանն մակարդակի պարզաբանման նպատակով արված ուսումնասիրությունների արդյունքները.
7) ստանալ տնտեսության իրական հատվածներում բիզնես և արտադրական գործընթացներում թվայնացման առկա վիճակի վերաբերյալ տեղեկատվություն.
8) ստանալ տեղեկատվություն թվայնացման ոլորտում ՀՀ միջազգային երկկողմ և տարածաշրջանային համագործակցության առկա ծրագրերի վերաբերյալ.
9) ստանալ տեղեկատվություն ՀՀ՝ թվային գլոբալ շուկաների հետ ներդաշնակեցմանը միտված տեսլականի վերաբերյալ.

10) ստանալ ՀՀ-ում թվային ծառայությունների հանդեպ հասարակության վստահության բարձրացմանն ու ուղղված քաղաքականության վերլուծության արդյունքները:

11) ստանալ կիբերանվտանգության ազգային քաղաքականության և դրան առնչվող նորմատիվ ակտերը.

12) ստանալ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ներդրված էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկման արդյունքների և ազդեցության մոնիթորինգի նյութերը.

13) ստանալ տեղեկատվություն ՀՀ պետական մարմիններում թվային օրակարգի ներդրման համար՝ անհրաժեշտ մասնագետներին ներկայացվող պահանջների, յուրաքանչյուր պետական մարմնում նոր ռեսուրսների հավաքագրման և առկա ռեսուրսների զարգացման վերաբերյալ:

Պարտականությունները.

1) մշակել Հայաստանի Հանրապետության թվային փոխակերպման միասնական քաղաքականության և օրակարգի նախագիծը, ուսումնասիրել ՀՀ թվային փոխակերպման միասնական քաղաքականության և օրակարգի մշակման նպատակով համապատասխան մարմիններից ստացված տեղեկատվությունը.

2) վերլուծել ՀՀ թվայնացման օրակարգի իրագործման նպատակով անհրաժեշտ վարչարարական մեխանիզմների և ընթացակարգերի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքները և մշակել ՀՀ թվայնացման օրակարգի իրագործման համար անհրաժեշտ վարչարարական մեխանիզմները, ընթացակարգերը և գործիքակազմը.

3) ստանալ Հայաստանի Հանրապետության թվայնացման օրակարգի իրականացման ճանապարհային քարտեզի և գործողությունների պլանի մշակման համար տեղեկատվություն և դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական, մարդկային ռեսուրսների հնարավորությունները.

4) մշակել ՀՀ թվային տվյալների կառավարման համապարփակ քաղաքականության տեսլականի նախագիծը՝ ներառելով այնպիսի խնդիրների կանոնակարգումը ինչպիսիք են էլեկտրոնային/թվային տվյալների դասակարգման, հավաքման, մշակման, պահպանման, փոխանակման միասնական և ստանդարտ ձևաչափերի մշակումը և ներդրումը.

5) մշակել ՀՀ թվային օրակարգից բխող ոլորտները կարգավորող իրավական ակտերը և ներկայացնել առաջարկություններ ոլորտները կարգավորող իրավական ակտերի բարեփոխման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ.

6) մշակել ՀՀ-ում հասարակության կիբերհասունությանն ուղղված միջոցառումներ և ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում հասարակության կիբերհասունությանն մակարդակի պարզաբանման նպատակով արված ուսումնասիրությունների նյութերը.

7) մշակել տնտեսության իրական հատվածներում բիզնես և արտադրական գործընթացներում թվայնացման խրախուսմանն ուղղված քաղաքականություն և ուսումնասիրել տնտեսության իրական հատվածներում բիզնես և արտադրական գործընթացներում թվայնացման առկա վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը.

8) ներկայացել առաջարկություն թվայնացման ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային երկկողմ և տարածաշրջանային համագործակցության գործող ծրագրերի և այդ ծրագրերի իրականացման միջոցառումների պլանավորման և համակարգման վերաբերյալ կատարված ուսումնասիրության հիման վրա.

9) մշակել ՀՀ թվային գլոբալ շուկաների հետ ներդաշնակեցմանը միտված քաղաքականությունը, ընթացակարգեր, ստանդարտներ և ուղեցույցեր.

10) ներկայացնել առաջարկություն ՀՀ-ում թվային ծառայությունների հանդեպ հասարակության վստահության բարձրացմանն ու լայն կիրառման խթանմանն ուղղված քաղաքականության և միջոցառումների մշակման ուղղությամբ.

11) ներկայացնել առաջարկություն կիբերանվտանգության ազգային քաղաքականության և դրան առնչվող նորմատիվ իրավական դաշտի, և իրականացման գործողությունների պլանի մշակման վերաբերյալ.

12) վերլուծել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ներդրված էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկման արդյունքները և ազդեցությունը, ինչպես նաև քաղաքացիների և բիզնեսների գոհունակության մոնիթորինգի արդյունքները.
13) Վերլուծել ՀՀ պետական մարմիններում թվային օրակարգի ներդրման հնարավորությունները անհրաժեշտ մասնագետներին ներկայացվող պահանջները, յուրաքանչյուր պետական մարմնում նոր ռեսուրսների հավաքագրման և առկա ռեսուրսների զարգացման վերաբերյալ և ներկայացնել առաջարկություն պետական մարմինների աշխատակազմերի տեղեկատվայնացման և հատուկ համակարգերի պատասխանատու ստորաբաժանումների մասնագետների վերապատրաստման վերաբերյալ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1.Կրթություն, որակավորման աստիճանը.
Բարձրագույն կրթություն

3.2.Մասնագիտական գիտելիքները.
Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3.Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը
Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ տնտեսագիության բնագավառներում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ.

Ընդհանրական կոմպետենցիաներ.

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ.
1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակը

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և որոշումների նախապատրաստման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը
Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնակցում է տարբեր մարմինների ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: